ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

23.07.2019
342-67

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարար Սուրեն Պապիկյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Պապիկյան,

2019 թվականի ապրիլի 22-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ)-ի դիմել էր Ձեր ղեկավարած գերատեսչություն՝ խնդրելով տեղեկացնել, թե ինչ փուլում է գտնվում է Արագած լեռան ստորոտին, Քարե լճի ափին տեղակայված ռեստորանային համալիրի տարածքի անօրինական պարսպի քանդման հարցը (պարսպի վերաբերյալ նախորդ հարցումներն ու դրանց պաշտոնական պատասխանները՝ http://www.givemeinfo.am/hy/case/2441/?fbclid=IwAR1WyKxonbp2SDP2ulwlnrtHYh1FToPsMzCMiXTMwW3eFCFtCso5lxNmr8k):

Ի պատասխան մեր հարցման՝ Նախարարությունը 2019 թվականի ապրիլի 30-ին մեզ էր փոխանցել Ուշի համայնքի ղեկավար Սիմոն Սիմոնյանի գրությունը, որը հաստատում է, որ պարսպի քանդման աշխատանքները կիրականացվեն 2019թ. հուլիս-օգոստոս ամիսներին http://www.givemeinfo.am/hy/case/2673/?fbclid=IwAR3eYGRten691D-z9GKn49WYzInv-Td32b9v5TnJbIf5N7BLS0ZJC-G_u_Y:

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում է տեղեկացնել, թե որ փուլում է պարսպի քանդման հարցը: Խնդրում ենք, տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝ ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան